*Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին /TRACK CHANGES/*
*ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-609$^{2}$-01.06.2023-ԱռՀ-011/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

<<Նույն կետով սահմանված կարգավորումները չեն ~~վերաբերում~~ տարածվում առողջապահական՝ ~~պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող պետական կամ~~ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններում բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններին~~ն~~ վրա:
Առողջապահական համայնքային ենթակայության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ղեկավարին՝ համայնքի ղեկավարը նշանակում է <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերին համապատասխան:>>:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: